

Ոչ մի ներքին կապ չունենալով մեր ժողովրդական վեպի հետ, որ պատմական սերմից է աճել, այս զրոյցն պէտք է այն արւեստական հանգոյցների շարքը գտանել, որոնցով ժողովուրդը անգիտակցաբար երբեմն կապում է իւր ազգային աւանդութեանց թելը, հրապուրելով անւանց արտաքին նմանութեամբ։ Սակայն զրոյցս նորանով է հետաքրքրական, որ նորանում՝ ըստ օրինակի հռոմէական աւանդութեան՝ երկու հերոսաւոր եղբայրներ քաղաքի հիմնադիրք են հանդիսանում, առհասարակ երկու եղբայրք արկածները հնումն կազմում էին թափառական աւանդութեանց նիւթ, բաւական է յիշել Ռոմուլոս եւ Ռեմոս, Բունաց Գարմոդիոս եւ Արիստոգէտոն, Ագամեմնոն եւ Մենէլասոս, Աստուածաշնչի կայէն եւ Արէլ, Գերմանաւալցը Բալդուր եւ Հիւգը (Hödr) եւ այլն. սովորաբար երկու եղբայրներից մէկը շուտով իւր վախճանն է գտնում. (Արէլ, Ռեմոս, Գարմոդիոս, Ագամեմնոն)։

Հիւգը կոյր է հանդիսանում. ըստ յուսաց աւանդութեան՝ կաստոր եւ Փոլիսգեքէս, Գիոսի որդիքը (Dioskuren) փոփոխաբար ապրում էին՝ մէկը երկրիս վերայ արեւի լուսով, միւսը՝ գետնաշխարհի (դժոխքի) մթութեան մէջ (Որիսեւս 11, 303)։ Նոցա գլխաւոր ամբարաստութեան էր ամառային արեւադարձին։ Այս առասպելների սկզբնական հայրենիքը հասնական է Բաբելոնում որոնել, որտեղից է ծագած արեւի եւ լուսնի (Համաշ եւ Սին) պաշտամունքը։ Կուշտուրայի գեո. ստորին աստիճանի վերայ կանգնած ազգերի երեւակայութիւնն պէտք է համապատասխան ազգերի երկրիս այս երկու լուսատուները, որոնցից մէկը անփոփոխ է իւր մշտնջենաւոր շարժման մէջ, իսկ միւսը՝ տարւայ որով ժամանակները նւազում, կորնշում է եւ դարձեալ փայլում երկնականարում։

Մեծ Մհերի մասին մեր աւանդութիւնները շատ քիչ են հաղորդում, ըստ մեծ մասին նորա անունն անգամ չէ յիշուած. նորա խղճալի վախճանը աշխատութեան մէջ միանգամայն անհամապատասխան է ժողովրդական հերոսների բնաւորութեանն։ Առիւծի կէս անելը այստեղ մեզ մօտ յիշեցնում է Աստուածաշնչի Սամոնի շահաւորութիւնը, վերջինս եւս պատկանում է հնուց ցիւցազնների այն բազմութեանն, որոնք լինելով անյանկան ոյժով օժտւած՝ յաղթում են զանազան հրէշների. Ռուսոնմ պարսից վեպում սպանում է Սպիտակ Գեւին, Հայոց Վահագն, Գերմանաւալցը Սիգֆրիդը եւ Ռուսաց Դորոքինայ կուռում են վիշապների հետ, Հեւ-

րակղէս՝ առիւծի հետ, Իգդուբար (Նիմրոդ) ասուրական առասպելում յաղթում է թեւաւոր հրէշին։ Այս աշխարհ հնութեան պատկանող աւանդութիւնները, որ սկզբում բարի եւ չար ոյժերի կռիւն էին արտայայտուած, ժամանակի ընթացքում հեշտուի կարող էին ժողովրդի սիրելիների վերայ անցնել։ Այսպիսով եւ այս միւշադէպը միանգամայն օտար սերմ է մեր բուն գիցացական աւանդութեանց շարքում։

(Հարսն-իւլի)

Բ. ՆԱՍԹԵՆՑ



Թ Գ Ր Ա Յ Ո Ւ Թ Ի Ն

ԿԵՂԵՍԻՐ ՄԵՏՆԵՍՈՍԱՐԹԻՆ

Փաստոսի յիշատակարանի վերաբերեալ մեր «Կիսատղութիւնները», որ արտասպուլեց «Հանդիսի» էջերից ուրոյն զբոյլի մէջ, Մարգի մարտ թուարաւել քան շորս էլ է խլել։ Այնտեղ Գ. Սո. Մայիսասեանից՝ մեր առաջնորդած հիմքերից շարքը «անշնան են» հռչակուած, «երկուսը կ'ունենային նշանակութիւնը, եթէ բռնազօւս եւ կամայաբար մեկնուած չլինէին», իսկ վերջին երկու կետերում էլ ամենամեծ սխալն ենք գործում մենք։ Այդ պատճառով հասնում ենք «խոշոր եղբակացութեան, որի անունն է խոշոր սխալ կամ խոշոր թիւրիմացութիւն»։ Ուստի եւ «ցաւալի է այն երեւոյթը, որ ներկայումս Հայ բանասէրներից ոմանք հետազօտութիւնը դարձրել են խուզարկութիւն եւ կեղծիքների որոնել քննադատութեան միակ նպատակը։ Այս միակողմանի եւ սխալ հետեւանքների հասցնող ուղղութեան պատկանող ներքի մէկն է եւ այս զբոյլի հեղինակը»։ Գաւով զբոյլ լեզուին, «ուղղակի տաժանելի աշխատութիւն է նրա գրութեանը կարգալը. սրա վրա աւելացնենք տրամաբանական մթութիւնը, որ միանգամայն համապատասխանում է լեզուի մթութեան, ընթերցողը չէ կարող հետեւել, թէ սրտեղ է այն հարց դրուել եւ որտեղ վերջանում», երբ է վճռուել եւ ինչպէս է վճռուել, Ինչու է մէջ ընկնում մի հարց, որ բուն խնդրի հետ անմիջական կապ չունի եւսպիսի։ Այս տեսակին վերաբերեալ օրինակները շատ տեղ պէտք է բունէին, ուստի ստիպուած ենք բաց թողնել։

Ով ծանօթ է մեր կոմիտեան մամուլի մէջ տիրող արքի նաչակի, օճի եւ խմբակների հետ, նրան պարմանալի չի թուալ Մուրադ այդ մատենախոսականը. այնտեղ խաշ է քաշուած մեր զբոյլի հեղինակի վրա, որը ոչ թնտուած է եւ ոչ հերքուած, այլ լիկ հայհայտուած է ընդհանուր այն ակնարկների տակ, Այդ նպատակով եւ այդ եղանակով սովորական է մեր մէջ հայիւ տալ նոր լայն տեսնող հրատարակութիւնների համար. բայց այդ մատենախոսութիւն չէ, որի նպատակն է ճշմարտութիւնը պատկերացնել ընթերցողների առաջ։

Իսկ թէ ինչ է իսկոյն մեզը կը տեսնենք: Յերուս
նէջ Շերվանդադէի մի նկարագրութիւնը թէ ինչ-
պէս իւր ապագայ: Հերոսը փոքր ժամանակ իւր
վեզէր արայայայտել էր կարողանում. մի անգամ,
անցնելու ժամանակ, բնագոյնէ կուսացաւ նա,
փողոցից մի քար վերցրէր, խփէր իւր Տօր թշնա-
մու երկյարկանի շինութեան, լուսամուտից մի
ապակի կտորեց եւ, մութ էր, անցաւ գնաց, տես-
նող չեղաւ: Այդպիսի շարունակութիւններ կարգէն
է անցնել արդէն մեր մէջ մասնախոսական հաշուե-
տութիւններէ մի մեծ մասը: Արդ՝ ոչ այնքան մեզ
պաշտպանած լինելու մտքով Մուրճի որհարական
խաշից, որքան մեր ժամանակակից ընդհանուր
գրական այս երեւոյթի մի մանրանկարը արձանա-
դրելու նպատակով կանգ առնենք Պ. Ստ. Մալ-
խանեանի մասնախոսականի վրա. տեսնենք ցու-
ցումներն եւ իրողութիւնը անկէ՞նք են այնտեղ թէ
ընդհակառակն կեցածաւր. կարծում ենք որ էլ
ուրիշ մի ապացոյց իմ քննադատի անբարեխղճու-
թեան մասին պէտք չէ. բաւական է եթէ ցոյց
տանք թէ Մուրճի ընթերցողները մեղրեցրուած
են, իսկ իմ հիմքերն ու եզրակացութիւնները
այլեւնայոյց են առասպելաբանութեան: Ըստ որում
սխալած ու թէ եզրակացութիւններէց առաջինն ու
վերջինն են, որ ճշդ են հաջորդուած Մուրճին,
իսկ մնացած վեցը այնքան այլանպատակած են իմա-
տով, որ ոչ թէ միայն էլ բանի պէտք չեն նոցա,
այլ եւ նրանցից հրաժարուելով հրաժարուած եմ
եւ իմը չեմ ընդունում այն եզրակացութիւնները:

Մեր Բ. նկատողութեան մէջ (էջ 8—15)
այս եզրակացութեան ենք կէտ, որ Ձ. դպրու-
թիւնը միակերպ շարայարեալ մի Տեղեկակի գրչի
ծնունդ չէ, այլ ըստ կողմնակի եւ չորս մասնա-
նայնաւոր տարբեր տարբեր յիշատակութիւններ
մի իմագործելով, նրանցից գլուխներ յօդինելով եւ
մէկը միւսի մէջ հիւսելով: Արդ՝ Մուրճի մէջ մեր
այդ միտքը այսպէս է ընթերցողներին հաղորդուած —

“Ձ. դպրութեանը բաղադրած է 16 մանր
գլուխներէց, այն ինչ պարունակում է և չգլխի
նիւթը, իմաստի այս այլանպատակութիւնը տեսնե-
լով, մտածում ենք երկուսից մէկունով. կամ
այն է որ մեր քննադատը այնքան երեխայ է, որ
Շերվանդադէի հերոսի նման գլխու ուխտանք հա-
կաւարկելու քար գցել, կամ եւ Մուրճի ըն-
թերցողներին երեխայի տեղ գրած, շահագործում
է նոցա վտառահալութիւնը. մէկը միւսից աւելի ցաւալի
է, եթէ որպէսզէն այդպէս է:

Ապա 3—11 նկատողութիւններէ մէջ (էջ
15—55) յայտնել ենք այդ միտքը թէ Գ. Ի արդի
սխալատականի մէջ կան բուն ժողովրդական
առասպելական կրկնութիւններ (Գ. 26—44 եւ
45—49) եւ կեղծ շահ արուեստական կրկնու-
թիւններ (Ձ. դպր. 2—7 և 11—15 եւ Ե. 8—19).
մէկի մէջ տեսնում ենք ժողովրդական պարզու-
թիւն, ոգի, ոճ, գրականական անգիտութիւն,
միւսի մէջ սոսկ յատուկ անուններ, արուեստական
շարադրութիւն եւ յօդինածի մէկի մէջ խոսում
է մի Տեղեկակ, միւսի մէջ խոսում է մի այլ Տե-
ղեկակ: Մեր հիմքերը եւ պատճառաբանութիւնը
Մուրճի մէջ բացակայում են, քննուած չեն, իսկ

այդ մեր եզրակացութիւնը հաղորդուած է այնտեղ
այսպէս — “շատ գլուխներ (??) բովանդակու-
թիւնայն են, միայն տարբեր են նրանց մէջ յա-
տուկ անունները, Արդեւք Մուրճի ընթերցող-
ները Պ. Ստ. Մալխանեանի այս հայտնուած
թիւնից գէթ մի հեռաւոր դատաւար ստացել են
այս խնդիրներին մասին. Ի հարկէ ոչ:

Մեր վզին այսպիսի եզրակացութիւն էլ
(հիմք) է փութաւտուած. “Այս դպրութեան մէջ
գրուած են եկեղեցականների ցանկեր, այն-ինչ
բուն փաւստոսի մէջ բերում են նախադարձի
ցանկեր, Պ. Արդ՝ չենք տեսել, եւ չենք էլ կարող
երբեւիցէ տեսել, թէ Ձ. դպր. մէջ գրուած են
եկեղեցականների ցանկեր: Էջ 55 մեզը գրել ենք.

“Ձ. դպրութեան մէջ չկայ մի անուանական կա-
դրի վրայից Ձ. դպրութեան կրկնութեան հա-
մուած լինելի տեղաւոր, Մի անուանականութեան
սխալ է, որ այդ տողերի մէջ “Ձ., և, մինչ պէտք
է լինէր “Գ—Ե., բայց այնուամենայնիւ նոյն իսկ
այդ “Ձ.ի ներկայութեամբ էլ գեռ մեզ վերա-
գրում են մի անճշդ մտքը. եւ ինչու, չգիտենք:

“Ձ. դպրութեան մէջ, կարգում ենք այնու-
հետեւ, յատուկ անունները հայացրած ձեւով են,
այն-ինչ բուն փաւստոսի մէջ ոչ միայն օտարազգի,
ոչլեւ հայացած անունները գործ են անում
յուշական ու, Եւ վերջաւորութիւններով, Մի
խօսք, միայն մի խօսք խառնաբառում է զգում այդ
բոլորի մէջ: Մենք ոչ մի անգամ չենք յաւակնել
որոշելու “բուն-փաւստոս, մի իմաստ, այդ պէտք
է ի նկատի ունենալ իմ քննադատը, եթէ անկեղ-
ծութիւն ունենար: Եթէ բոլոր Գ—Ե. դպրու-
թիւնները ամբողջապէս ընդունինք բուն փաւստոս,
արդարեւ իմ կարծիքը ամբողջում կը լինէր, մինչ
մեր նպատակն այն է որդի թէ մեր և բունը,
անայլապէս, միայն մի Տեղեկակի գործք եւ գեռ.
վերջին խօսքը չենք անարտել: Նպատակը հիմք
գարձնել եւ հիմքը նպատակ՝ առաքելութեան հա-
մար նշանակութիւն ունի, իսկստուգաբանութեան
գործում միայն շփոթութիւն կարող է առաջա-
ցնել: Այդ ստիպուած ենք լսել առ քննադա-
տին, որովհետեւ մինչ մի կողմից տեսնում ենք
Ձ. դպրութեան մէջ բոլոր անունների հայացրած
ձեւը առանց բացառութեան, միւս կողմից նկա-
տում ենք, որ նախորդ դպրութիւնների մէջ մէկը
միւսի կողքին անհամար անգամ հանդիպում են
թէ ասորական, թէ յուշական եւ թէ հայացրած
ձեւերը, թէպէտ անաւանայի եւ որ յուշական
ձեւերը գերազառ բազմութիւն են ներկայացնում.
Այդ է, որ մենք մեր դրքի էջ 56—58 հիմք ենք
ստել տարբերութիւն նկատելու Ձ. դպրութեան
մի կողմից եւ միւս կողմից նախորդ դպրութեանց
մէջ. բայց այդ էջերում մեր բուն ասելիքը աշա-
թող է արուած. եւ այդ այն երեք անունների
(Ռաստոմ, Տիրանոմ եւ Արգամ) տարբեր ձեւերն
են, որ ունին նոցա նախորդ դպրութեանց եւ
Ձ. դպրութեան մէջ, նոցա միեւնոյն երեք ան-
ձանց անուններն են, բայց մի յիշատակական յի-
շում է հայ հնչմանը, միւսն ոչ—հայ՝ այլ ասորի
հնչմանը: Այդ է որ էական է եւ որք բաց է թու-
ղել քննադատը, իսկ ու, Եւ վերջաւորութիւնների

մասին այն էլում մեր յիշածը, իբրեւ նիւթի հետ կապ ունեցող մի նկատողութեան, համառօտել ենք մի ուրիշ բանասերի գործերէց, եւ նշանակել ենք նաեւ իւր տղերքը, — որը եւ նկատել է քննադատը:

«Չ. դպրութեան» մէջ կայ ժամանակագրութիւն, այնինչ բառն փաստաստի մէջ ժամանակագրութիւնը բացակայում է: Չարմանալի չէ՞ ընթերցող, ի՞նչ է մի բանասեր մի սեղ կարգաբար ասելով, ժամանակագրութիւն, միւս բանասերը դար առեղ թէ այդտեղ գրութեան է «այս», «այ» տուհետեւ, իսկ տարւթիւն չկայ: Այդպէս է դարձել եւ այժմ: Ինչից ստիպւում, չգիտեմ, Պ. Ստ. Մալխասեանը առում է, որ Չ. դպրութեան մէջ ժամանակագրութիւն չկայ, միջև այնտեղ ժամանակագրութիւն կայ եւ չորս մասնագրական նշխարներով՝ երեւելի էպիփոպոսներ ժամին պատմող հատուածն է, որ պահել է այդ ժամանակագրութեան փշրանքը՝ ոչ միայն նախորդ երեք դպրութեան մէջ, այլ եւ միւս մասնագրական երեք նշխարների մէջ իբրեւ բացառական, իբրեւ սովորականութեան դէմ՝ զգրի մի սխալ, իբրեւ ժամանակագրական մի նախատիպ յիշատակարանի նորասէլ խմբագրութիւն: Չի տեսնում. քննադատն այդ, եւ ինչից է որ չի տեսնում՝ զժուրը և ասել: Ի վերջոյ յիշեց եւ այս վերջինը. առաջին երեք դպրութեան մէջ առաջին անգամ մի անձնաւորութիւն յիշուցող յետոյ, երկրորդ անգամ նոյն անձնաւորութիւնը յիշում է այնպիսի մի խմբագրականով, որ իբր ընթերցողին արդէն յայտնի է նա. դրա հակառակ՝ նախորդ դպրութիւնների մէջ յիշում մի քանի անձնաւորութիւններ երբ Չ. դպրութեան մէջ են յիշում, երեքադրում է թէ նորա ընթերցողին ծանօթ չեն եւ առաջին անգամ են յիշում Չ. դպրութեան մէջ: Մեր այս նկատողութիւնը որոշ չափով այսպէս է խանգարւում. «Չ. դպրութեան մէջ յիշատակւում են մի քանի անձնաւորութիւններ, որոնց մասին խօսք է եղել եւ նախընթաց դպրութիւնների մէջ. բայց այստեղ նորաք բերւած են իբրեւ նոր անձնաւորութիւններ եւ ոչ թէ իբրեւ արդէն ծանօթ»:

Ահա վերայիշեալ աղաւաղումներն են այն հայեւին, որի մէջ պատկերասում է մեր առաջ քննադատը: Մի կողմից, ի հարկէ, ցատկ է, որ ողջա հաստատում են մեր մասնագրական ներկայ բարբերում մէջ՝ ազնուութեան և փափկութեան նկատումների դիրքաւ բժառանգը (Հանգ. Ամս., Մայիս, էջ 139) եւ միւս կողմից առաւել ցատկ է Պ. Ստ. Մալխասեանի՝ այդպիսի բարբերումն օրինակ ծառայելու գրութիւնը: Արդարեւ՝ այն չորս էջի մէջ, փոխանակ աղաւաղումների եւ այլանդակւած եղանակութիւնների, մեք կարող էինք քննադատից լսել լըմարա առարկութիւններ եւ հերքումներ. այդ մասնագրական այն ժամանակ նշանակութիւն կ'ունենար փաստաստի գրականութեան համար. իսկ այժմ նա, պարունակելով քննադատի անձնական անհայտ տրամադրութեան արտայայտութիւնը, ստանում է՝ միաժամ մաքեր պղտորելու նշանակութիւնը, որ գասական մի երկի

մասնագրութեան հետ կապ ունենալ չի կարող ի հարկէ:

Չենք մոռանում որ քննադատը մեր ոճին եւս ազդեցութիւն է ընծայել, առաջ բերելով մեր գրքերից այս լեզուական անհարմարութիւնները. «բայց այս անգամ եւս Չ. դպրութեան մէջ հայացրած վիճակ ունի անուշա Առաքումով, բաց ի այն որ տարբեր ձևի մէջ է նա նախորդ դպրութեան համամասնութեամբ»։ «Կարողութիւնը յետոյ, առաջինը Չ. դպրութիւնն ինքն է, որ իւր գոյութիւն ստանալու հարցը թէ ժամանակի եւ թէ եղանակի նկատմամբ հիմներ է ներկայացնում վճռելու այնպէս՝ թէ այն կարկաստան է եւ կցուած է փառաստի պատմութեան ուշ ժամանակ, Պեդել թէ այս օրինակների մէջ խմբագրը (մանաւանդ կայացրեալ պարբերութեան մէջ) չենք կամենում. թէպէտ այդ կարող էինք անել հիմնուելով նոյն իսկ ոչ-մասնագէտ ընթերցողների վկայութեանը վրա: Այս կ'ստանջ միայն, որ առեղի պարզ գրելը, քան այդ օրինակների մէջ տեսնել կարելի է, մեք առանձին փոյթ չենք ունեցել, աչքը առաջ ունենալով մեր գրքերի ազգայն ընթերցողներին. էլ չենք յիշում ինչի մասնագիտական բնութարաններ, եւ նրան համապատասխանող մոգերի նրբութիւնը: Բայց առիթը ձեռքից բաց չենք թողնում յիշելու, որ պահարարելին չէ թէ գասական երկերի շուրջ կատարուող համագոյութեան մէջ ոչ-սովորական լրագրական կամ վիպական ոճի բացակայութիւնն է (դրանով Հայոց լեզուն երբեք վտանգուած լինել չի կարող), այլ պահարարելին այն ընդհանուր, երկար տեւողութիւն ունեցող երեւոյթն է, որ նախկին Հրատ. ընկեր. գրքերի մէջ խանգարուած լեզուները որբագործող մի որբագրել եւ խմբագրել անձն այսօր կանգնել է մի մասնագիտական հետազոտութեան մէջ վիպականի պարզութեան ինքնընդամ մի ոճ որոնելու է հետամուտ եղել: Այդ անձն կրկին Պ. Ստ. Մալխասեանն է, որ՝ այնքան պարզութեան շտապով է որտացաւ ցոյց տալով հանգեմէ իրեն, այն ոչ-մոդովական, անմարս եւ անհասկանալի թարգմանութիւնների, քննիչն, նոյն իսկ թարգմանիչն էր: Ինչո՞ւ ուրեմն, հարցնում ենք, ժողովրդի համար հրատարակուող այդ գրքերը տպւում էին ոչ-ժողովրդական լեզվով. այդ կարելի է, եւ պաշտպանում էլ էին իբրեւ այն գրութիւնը անփոփոխ եւ անայլով, իսկ մեր գրքերը, որ հրատարակւած է միայն Մալխասեանների համար (որոնք ի հարկէ ժողովուրդ չեն), անշուշտ եւ անպատճառ պէտքը է ունենալ մեր պահանջած այնքան պարզութիւնը: Էլ ուր մնաց սկզբունքը, հետեւողականութիւնը եւ գրական ազնուութիւնը:

Այս բոլորից յետոյ չգիտեմք կը համազօր՞ հենց ինքը՝ մեր Պ. քննադատը, որ կեղծաւոր մասնագիտութիւնը միշտ եւ հաւատարմով գէշը է թէ մարդի չըրպարան գրական ծանօթ գէմբեր չպարբերում, թէ մասնաւոր ընդհանուր եւ անհանգիստ գրական ձևաւորումներ, եւ թէ հին հին յիշողութիւնները մեր մտքերի մէջ վերանորոգւելում:

Բայց մենք նիւթից կարող ենք չափ հեռաւալ, երբ խաղը հասնում է այդ շրջապատի նոթ գէղեցերին եւ հին հին յիշողութիւններին, քանի որ առանց այդ էլ երկարեցինք ընդհանուր երեւոյթի մի փոքրիկ մանրանակար ներկայ գրութեան մէջ պատկերահանելու՝ ուստի լաւ է, որ դադարենք այստեղ։

Քաղախանի, 6/19 Մայիսի 1902:

ԳՐ. ՏԷՐ-ՊՕՂՈՍԵԱՆ



ԳՐԱԳՆ ԺԱՄԱՆԱԿ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՍ

Երախտապարտ եմ քարերդդի վեպագիր Պ. Ռ. Զարդարեանի՝ որ վերջապէս բարեհաճեցաւ թէ եւ քիչ մը ուշ — նոր առիթ մ'ընծայելու ինծի, որպէս զի այս անգամ ամբողջացնեմ իր մէկ նորավէպին վրայ ունեցած ընդհանուր կարծիքս, որուն մէկ համառօտ եզրակացութիւնը հրատարակուեցաւ «Հանդէս Ամսօրեայ» պատուական պարբերականին 1902 Մայիս ամսուան պրակին մէջ։

Եւսմ զարմանար դիտելով որ Պ. Զարդարեան քիչ մ'արտասովոր յուզում կը մատենէ իր բացատրութիւններուն մէջէն։ Պատճառը շատ պարզ է։ Մեր մէջ գրականութեան սիրահարները — չքնելու համար գրագետները — վարժուած են գովաբանութեան եւ խռնկի միջնորոտով մը շրջապատուած մնալու, միջնորոտ մը, զոր իրենք արուեստական հնարքներով կը ստեղծեն, կը խնամեն, կը պահպանեն, որուն մէջ միայն ներշնչում կը գտնեն։ Պակսի օր մը, վարկեան մը այդ միջնորոտը՝ եւ ահա ջղային գալարուածներով կ'ոտոտոտեն, յարդի վրայ մնացած ձուկի մը չափ դժբախտ։

Հոգեկան մասնաւոր աս վիճակն է որ կը շեղեցնէ Ռ. Զարդարեան վիճարանութեան սովորական բառգրքէն, եւ կը ձգէ զինքն անհաճօյ խորթութիւններու մէջ — զոր ինքը չհնարեց — եւ զոր եւ ամփոփեցի «Զեւարան»ի մէջ, յօրինուած «ի պէտս Արասդրողաց»։ Պ. Զարդարեան յաճախ սովորական ընդօրինակող մըն է այն «Զեւարան»էս, եւ իր սա արարքը բարձր ձայնով պիտի պախտապախուի քանի մ'ականաւոր բանասեր-բանաստեղծ-թարգմանիչ-հրապարակագիրներէ, որոնք ուղեքներն գետինը զարնելով պիտի պահանջեն հայրութիւնը ան ամէն բառերու, մակդիրներու, ասպարուածքներու, նախադիւրներու, թշնամանքներու՝ զորս

իրենք հնարեցին, իրենք շրջաբերութեան դրին, եւ իրենք վերածեցին անձնական մենաշնորհի։

Զարդարեան պիտի նկատուէր անոնցմէ իբր գոեհիլ Գիւրգիսը մը՝ եթէ առանց անոնց արտօնութեանը գործածեց արժանաւոր այլանշանկութիւնները։ Աս կէտին մէջ՝ Պ. Զարդարեան համբաշխաբար պատասխանատու է — իր եղբայրակից Մակարացի Արտ. Յարութիւնեանին հետ — փառապանծ եւ մեծահռչակ քանի մը վարժապետներու հանդէպ։

Գալով միւս մասերուն, անոնց եզրակացութիւնն է թէ ես պարզապէս տգէտ մըն եմ, յանդուգն տգէտ մը, թուլեբան տգէտ մը, ապուշ տգէտ մը, վերջապէս՝ մէկ բառով՝ տգէտ մը, որուն ամէն որ իրաւունք պիտի ունենար աւելցնել բառգրքին ամբողջ անականները։

Բարեբախտաբար՝ Պ. Զարդարեանի հմտութիւնը ամուր արմատներ չունենալով ոչ գէպի խորութիւն, ոչ գէպի ընդարձակութիւն, չէ կարող գուշակել եւ ինծի կրկնել Բրուտոնի դատապարտութիւնը. — «Մեռած մարդ մըն ես...»։

Զոր նա կ'ուղղէր համաւաւոր անտեսագէտ Ֆրեյտերիք Բաստիայի — իրենց երկայն վիճարանութեան վիճակներէն։ — Գրամագլխոյ ձրի փոխառութեան խնդրին մէջ։

— Monsieur Bastiat, vous êtes un homme mort!

Ստուգել՝ ցաւալի պակասութիւն մըն է, հմտութեան պակասութիւնը՝ որով շատ կենսական առիթներու մէջ մարդ անկարող կ'ըլլայ մէկ հարուածով — նոյն իսկ ուրիշ փոխ առնուած — տապալելու, անկենդան գետինը փռելու իր հակառակորդը։

Եթէ Պ. Զարդարեան չլրջաւ գլխուս զարնել Հերակլեսի՝ լախար, յոնցանքն իմ տգիտութեան չէ, այլ — քաղաքավարութեամբ խոսելով — Պ. Զարդարեանի անբաւական հմտութեանն է։

Ընդդիմախօսին գլխաւոր անհմտութիւններէն մէկն է — այսինքն անբաւական հմտութիւններէն — կարծել թէ ամէն նիւթի, ամէն առթի մէջ ներելի կամ արդարանալի է շրջաբանութիւններու, շրջապատութիւններու, փոփոխութիւններու եւ այլափոփոխութիւններու յախառն եւ անզուսպ գործածութիւնը, արժէ ու ձախէն, վերէն ու վարէն, բուրուստի հարուածներու նման՝ որմաք կ'ուղղուին ամենուր, ամէն տեղ, գաւթին կամ բակին մէջ, խորանին եւ դասին